ՍՈՒՖՐԱ, Ա. բ., ա. ճաշասեղան:

ՍՈՂՄԱԽ, տես ՍՈԽԱԽ:

Վ.

ՎԱԹԵԼ, Ա. բ., հոսիլ, վազել, թափել, հոսեցնել:

ՎԱՂՈՒԷՆ, Ա. բ., ՎԱՂՎԸՆԷ, ՎԱՂՎԷՆԷՔՆ, ՎԱՂՎԵՆԷՆ, ՎԱՂՎԸՆԷՆ, ՎԱՂՎԸՆՕՔՆ, մ. հ., առտուն կանուխէն:

ՎԱՆՑ, մ. հ., վասն, համար. վանց արգիլելու, արգիլելու համար:

ՎԱՏ, ա. վատէ, խոստում, վատ արիր, խոստացար. վատէդ մի՝ դառնար, խոստումդ մի՛ դըժեր:

ՎԱՐԵԼ, մ. հ., ճամբու դնել, ո՞վ էր վարել զիւր եարն:

ՎԱՐԻ, մ. հ., վայրի , վայրենի:

ՎԱՐՃԻՆԱԿ, մ. հ., վարուժնակ:

ՎԱՐԸՄՈՎ, ՎԱՐՄԸՆՈՎ, մ. հ., վարմ, որս, բռնելու գործիք. վարմով, որոգայթով, ուռկանով:

Վ՛ԵԼՔՆ, մ. հ., վայելչութիւնը:

ՎԵՐԷՍ, մ. հ., վրաս, իմ վրայ:

Տ.

ՏԱԼԱՊ, Ա. բ., ա. թալապ, խնդրել, խնդրուածք, խնդրանք:

ՏԱԼԻԿ, թ. տալ, ոստ, ճիւղ, փոքրիկ ճիւղ:

ՏԱՄՊՈՒՌ, ՏԱՄՊՈՒՌԱ, ա., պ., երկար կոթով եւ մետաղէ վեց լարերով կիթառ:

ՏԱՊԻԼ, մ. հ., այրիլ, մրկիլ, տառապիլ:

ՏԱՍՏՈՒՐ, ա. տէսթուր, թոյլտուութիւն, հրաման:

ՏԱՌՊԵԼ, մ. հ., աղքատ չքաւոր, թշուառ (տառապեալ):

ՏԱՌԱՊԵԼԱՆԱԼ. մ. հ., թշուառանալ, աղքատանալ:

ՏԱՏ, պ., արդարութիւն – ֆիրիատ ու տատ, արդարութիւն հայցող աղաղակ, կոչ:

ՏԱՐՊԱՑ, մ. հ. ա. հարուած, թ. տարպէ:

ՏԱՐՊԷԿ, մ. հ., տառապանքի աղաղակ, ցաւի երգ ?:

Կանչեցի տարպէկ մի նորա:

ՏԱՐՏ, պ. տէրտ, ցաւ, վիշտ:

ՏԵՂ, ՏԵՂԱՑ, մ. հ. , անկողին:

ՏԵՂԵԼ, մ. հ., տեղաւորել:

ՏԵՍԹՈՒՐ, տես ՏԱՍՏՈՒՐ եւ Դաստուր:

ՏԵՍԹԷ, ՏԵՍՏԷ, տես ԹԷՍԹԷ:

ՏԷՎՐԱՆ, ա. տավարան, շրջում, դարձք. տէվրան անել, շրջան ընել.